մի քառասուն տարի մնայուրդի լեռներից

Նարար

Մի քառասուն տարի մեհյանում լեռներում

Տուրքար

հայ ավանդական երգի-պարի խումբ

ԿՈՐՍՎԱԾ ԴՐԱԽՏԻ ԵՐԳԵՐ

«Նարեկացի» արվեստի միության գրահրատարակչական գործունեության հերթական թողարկումն է հայ ավանդական երգի-պարի «Նուբար» խմբի ձայնասկավառակ-ալբոմը: Այն բաղկացած է «Նուբար» խմբի ստեղծագործական կենսագրությունից, խմբի ղեկավար Լուսինե Նազարյանի ներածական խոսքից, որում նշված են երգերի աղբյուրները, դրանց բովանդակալից ծանոթագրություններն ու մեկնաբանությունը: Ներկայացված են նաև երգերի բանաստեղծական տեքստերը և բուն ձայնասկավառակը:

Իր գործունեության 15 տարվա ընթացքում «Նուբար» խումբը ձեռք է բերել հարուստ երկացանկ: Ի շարս այլ նմուշների «Նուբար»-ի երկացանկը զարդարում են Արևմտյան Հայաստանի Ակնա, Բալուի, Տիգրանակերտի Դերսիմի, Զմշկածագի և այլ շրջանների երգերը և պարեղանակները, որոնց մի մասը վերցված են Կոմիտասի, իր աշակերտ Միհրան Թումաճանի, Հովհաննես Աճեմյանի, Ավետիս Մեսումենցի և այլոց հավաքածուներից: Մինչդեռ ալբոմը համեստորեն վերնագրված է «Մի բուռ երգ Մնձուրի լեռներից»: Այնինչ, կարելի էր անվանել նաև «Մի բուռ Հայաստան», քանի որ այդ երգերը ներկայացնում են ոչ միայն Հայաստանի մի քանի բեկորները՝ դրանք նաև հայ ժողովրդի կենսագրության անկրկնելի էջեր են: Չէ՞ որ, ինչպես Կոմիտասն է ասել. «Երաժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին»: Ալբոմի սկավառակի վրա ձայնագրված են տարբեր ժանրերի երգեր՝ ծիսական, Համբարձման տոնի երգեր, անտունիներ և այլն: Ահավասիկ. «Վիճակի երգ», «Խաչին օրը լուսնկա լուս էր», «Օրորոցի երգ», «Կաքավ» և այլն: Սրանք կորսված Դրախտի երգեր են, ՏՈՒՆԴԱՐՁԻ երգեր՝ բանալիներ, որոնք պիտի գտնեն իրենց դռները, երգեր, որոնք կիսել են իրենց ստեղծող ժողովրդի ճակատագիրը: Դրանք մեզ են հասել Ցեղասպանությունից մազապուրծ, հրափորձությամբ «թրծված»: Տեղին են Կոստան Զարյանի հետևյալ տողերը, նվիրված Կոմիտասին.

... Վերջին մղձավանջ, վերջին սև տեսիլք,
Որի դանակը մորթել էր երգդ և սիրտդ փակել թանձր խավարում:
Հետո, Վարդապետ, լսո՞ւմ ես ձայնը տարագիր սրտիս,
Հետո, Վարդապետ, կգա վեհաշուք, պայծառ գմբեթը Հայոց աշխարհի
Եվ կբարձրանան լուսե խմբերի երգեր աննման...

Ահա այդ աննման երգերից մի բուռը ընդմիշտ վավերացրել է «Նուբար» լուսավոր խումբը:

ԴԱՆԻԵԼ ԵՐԱԺԻՇՏ

ՀԱՅ ՏՈՀՄԱՐԻՒՆԻ ԿԱՆՉԸ՝ ՏԵՐՍԻՄԸ

Դարերու խորքէն եկող հայ տոհմարիւնի վկան է Տերսիմը: Հայոց պատմական Ծոփք նահանգի մաս կազմող Դերսիմը կը գտնուի Վանայ լիճէն հիւսիս-արեւմուտք, հիւսիսէն՝ Երզնկա, հարաւէն՝ Խարբերդ, արեւելքէն՝ Պինկէօլ-Մուշ եւ արեւմուտքէն՝ Սեբաստիա:

Պատմականօրէն, Տերսիմի լեռնաշխարհին վրայ դարերով ընձիւղուած ժողովուրդը՝ հեթանոս եւ քրիստոնեայ տեղաբնիկ հայերու շառաւիղներն են: Տերսիմի հիւսիսը՝ պատմական Եկեղեաց գաւառին մէջ կը գտնուէին հայոց հեթանոսական կրօնքի՝ Արամազդի, Անահիտի եւ Միհրի մեհեանները:

13-րդ դարու սկզբնաւորութեան արեւելքէն Տերսիմ մուտք գործած են ալեւի դաւանանքին հետեւող քիզիլպաշ ցեղախումբերը:

Այսօր՝ Արեւմտահայաստանի այս ծննդավայր-օրրանին մէջ կը գոյատեւեն Հայոց Ցեղասպանութեան հետեւանք դաւանափոխ, կրօնափոխ կամ թաքուն հայարիւն տոհմերու, գերդաստաններու եւ ցեղախումբերու սերունդները:

Աշխարհագրական այս տարածքին մէջ քրիստոնեայ հայեր եւ ալեւի քիզիլպաշ ցեղախումբեր համերաշխօրէն ապրած են դարերով եւ զէն ի ձեռին՝ միասին պայքարած Օսմանեան կայսրութեան դէմ, միշտ պահպանելով իրենց լեռնաշխարհի անկախութիւնը: Քիզիլպաշ ցեղախումբերու դաւանական կրօնական ծիսակատարութեանց մէջ խոր արմատներ ունի քրիստոնէական հաւատամքը: Քիզիլպաշ տերսիմցիները իրենց գլխաւոր սուրբ Ալիի կողքին Յիսուսը կ'ընդունին որպէս Աստուծոյ որդի եւ մարգարէ-առաքեալ: Սուրբեր կը նկատուին նաեւ Ս. Սարգիսն ու Ս. Գէորգը: Հայկական աւանդութեամբ կը խաչակնքեն հացը, իսկ իրենց մայր ուխտատեղին էր Տերսիմի Հալւորի բնակավայրի Սուրբ Կարապետ վանքը:

Տերսիմի լեռնային շրջանի հայ բնակչութեան մէկ հատուածի կրօնափոխ դառնալու պատմութիւնը կը սկսի 17-րդ դարու սկիզբը՝ թուրք-պարսկական պատերազմի եւ ջալալիներու ըմբոստութեան օրերուն, երբ մէկ կողմէ՝ Պարսկաստանի Սէֆեան հարստութեան կայսր Շահ Աբբաս կ'ասպատակէր Արեւելեան Հայաստանը, միւս կողմէ՝ Արեւմուտքի մէջ Օսմանեան կայսրութեան դէմ կը խմորուէր ապստամբ թուրք զինուորականներու շարժում մը, որ պիտի կոչուէր ջալալիներու ըմբոստութիւն: Հակառակ այն իրողութեան, որ ջալալիներու թշնամութիւնը ուղղուած էր սուլթանին դէմ, անոնք իրենց զինուորական արշաւանքներուն ընթացքին անխնայ կը կոտորէին եւ կ'իսլամացնէին հայաբնակ շրջանները:

Պատմական այս ժամանակահատուածին՝ 1604-ին, տերսիմցիներու հոգեւոր առաջնորդ Տէր Սիմոն ժողովի կը հրաւիրէ իր գիւղացիները եւ հետեւեալ այլընտրանքը կը փոխանցէ ժողովուրդին. կա՞մ կառչած մնալ Քրիստոսի հաւատքին եւ նահատակուիլ, կա՞մ, իսլամութիւնը ընդունելով, փրկուիլ: Տէր Սիմոնի առաջնորդութեամբ ժողովուրդը կ'որոշէ կրօնափոխ դառնալ, սակայն փոխանակ թրքանալու կամ սիւննի իսլամութիւնը ընդունելու՝ կ'որոշեն ընդունիլ իրենց հարեւան քիզիլպաշ բնիկներու ալեւիական կրօնքը: Տէր Սիմոն եւ բազմատասնեակ տերսիմահայ գիւղերու ժողովուրդը կը միանան իրենց հարեւան քիզիլպաշ Գուրէշան ցեղախումբին: Տէր Սիմոն կը դառնայ քիզիշպաշ հոգեւոր առաջնորդ եւ կը ստանայ Սէյիտ Ալի անունը, իսկ շատ չանցած՝ Գուրէշաններու հոգեւոր առաջնորդ փիրի (կաթողիկոս) մահէն ետք, կ'ընտրուի Փիրէ Փիրան, այսինքն մեր հասկացողութեամբ՝ կաթողիկոս: Այնուհետեւ՝ լեռնաշխարհը Տէր Սիմոնի յիշատակին կը կոչուի Տերսիմ:

Լեռնային Տերսիմը նաեւ բնօրանն էր Միրագեան հայ ցեղախումբին, որ համերաշխօրէն կ'ապրէր քիզիլպաշ տերսիմցիներուն հետ: Ռազմունակ հայկական այս ցեղախումբը՝ Օսմանեան բանակներուն դէմ տերսիմցիներու ըմբոստութեանց ժամանակ միշտ ռազմաճակատի գիծի վրայ առաջամարտիկ էր եւ ահ ու սարսափ կ'ազդէր թուրքերուն:

Մեծ Եղեռնի օրերուն Տերսիմի քիզիլպաշ ցեղախումբերը մերժած են մասնակցիլ հայութեան դէմ ջարդերուն եւ հայերուն ապաստան տուող հազուագիւտ այլազգներէն եղած են: Հայոց Ցեղասպանութեան ժամանակահատուածին՝ 30-40 հայեր ապաստանած են Տէրսիմ: Ցեղասպանութեան հանգրուանին Տէրսիմ ապաստանած շատ մը հայեր ալեւի դարձած են՝ իրացնելով տէրսիմցիներուն ապրելակերպը: Մինչեւ 1915-ի Ցեղասպանութիւնը Տերսիմի տարածքին գործած են 45 հայկական եկեղեցիներ եւ 5 վանքեր:

1938-ին, թրքական ճնշումներուն դէմ ծառացան Տերսիմի ցեղախումբերը՝ Սէյիտ Ռիզայի գլխաւորութեամբ: 1938-ի ըմբոստութեան ընթացքին, տերսիմցիներու կողքին զէնք վերցուցած են դաւանափոխ դարձած հայեր, իսկ ապստամբութեան տխուր վախճանին յաջորդող քեմալական բանակի ջարդերուն՝ տերսիմցիներու կողքին սպանուած եւ ջարդուած են նաեւ հայերը:

Մէկ խօսքով՝ նոյն հաւատալիքներով ու աւանդութիւններով, սակայն կրօնական տարբեր ուղղուածութեամբ ազգի մը երկու հատուածներու՝ դարերու ընթացքին դաւանանքը կորսնցուցած եւ դարերով ինքնութիւնը պահած նոյն ժողովուրդի համաձուլուած զաւակներն են տերսիմցի հայն ու քիզիլպաշը:

Պատմութիւնը տակաւին երկար ուսումնասիրութիւններու կարօտը ունի՝ լոյս աշխարհի բերելու Տերսիմ լեռնաշխարհի տեղաբնիկներու պատմութիւնն ու մշակոյթը:

Վահագն Գարագաշեան

«Հորիզոն» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր
Կանադա

937

Poker

erpat cemaldan mungur
suyu şarkundan Dolularla

937
Posen
Vank Kilesió

ԱՆԱՀԻՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԱՆՉԸ

Հայրենի եզերքը երգով ճանաչելն ու ճանաչելի դարձնելը պարտավորություն է, որ ստանձնում ես, և իրավունք, որ պիտի վաստակես: Դրանից հետո նոր սկսվում է այդ երգի տեսակը ճանաչելու, երգի միջոցով խոսակցական ու երաժշտական բարբառները յուրացնելու, երկրամասի բնությանն ու բնիկների մտածողությանն այս կամ այն չափ մոտենալու, առնչվելու, հասկանալու, զգալու, վերապրելու, ապա նաև վերարտադրելու ընթացքը... հետո ինքդ քեզ տեսնում ու ճանաչում ես այդ միջավայրում, և հակառակը, այդ ամենը գտնում ես քո էության մեջ:

Դերսիմի մասին ինքս առաջին անգամ լսել եմ 2011թ., երբ առիթ ունեցա ձայնագրվելու «Փեթակ» ձայներիզում՝ Զեյնոյի ու Նազլուի երգերը: Որոշ ժամանակ անց ազգագրագետ Լիլիթ Սիմոնյանի շնորհիվ առիթ ունեցա երգելու Չմշկածագի չքնաղ Անտունիներից մեկը՝ «Կաքավ մը կայնե քարին»: Հենց այս երգերն առիթ դարձան, որ սկսեի հետաքրքրվել, լայնացնել ունեցածս փոքրիկ գիտելիքը, ապա ձեռքս առնել Հովհաննես Աճեմյանի «Հարսնաճղայ» ժողովածուն՝ Ավետիս Մեսումենցի նոտագրություններով, և փորձել ընդլայնել վերջին ժամանակներում սովորած Դերսիմ-Չմշկածագի շրջանի երգերի ցանկն ու ծավալը:

Հովհաննես Աճեմյանի ժողովածուն վերնագրված է «Հարսնաճղայ: Հավաքածու հայ ժողովրդական երգերու Չմշկածագեն և շրջաններեն»: Պարունակում է «Հարսանեկան երգեր, անտունիներ, աշխատանքի, սրախոսական և զբոսանքի երգեր, պարերգեր, պարեր, զուռնայի եղանակներ և շերեր»: Այս հավաքածուի մեջ տեղ գտած նմուշներից մի քանիսը կամ դրանց տարբերակները կգտնեք նաև Միհրան Թումաճանի «Հայրենի երգ ու բան» ժողովածուի մեջ, որոնք Թումաճանը ձայնագրել է Բոստոնում հանգրվանած չմշկածագցիներից:

Աճեմյանի ժողովածուն ձեռք բերելուց հետո ցանկություն առաջացավ բոլոր կամ գրեթե բոլոր նմուշները պատրաստել համերգային կատարման համար, բայց ի վերջո ընտրվեցին դրանցից մի մասը, գրեթե կեսը, այդ թվում ծիսական երգեր, պարերգեր, անտունիներ:

Այնուհետև այս երգերի հիման վրա ստեղծեցինք համերգային ծրագիր: Երգերն ընտրելիս ավելի շատ հիմնվեցինք լսելիության հանգամանքի վրա, և ծրագիրը համալրեցինք Բալուի, Ակնա, Արաբկիրի և Տիգրանակերտի նմուշներով՝ վերցված Կոմիտասի, Միհրան Թումաճանի, Պետրոս Ալահայտոյանի ժողովածուներից:

Նշյալ շրջաններն ինչ-որ ժամանակ մտել են Խարբերդի նահանգի մեջ, դրա համար էլ հնարավոր համարեցինք այս նմուշները մեկտեղել ընդհանուր ծրագրի մեջ, և քանի որ հիմնական մասը Դերսիմի, մասնավորապես Չմշկածագի և հարակից շրջանների ավանդական երաժշտական մշակույթի նմուշներ էին, ընդհանուր առմամբ մեզ համար ամբողջացան որպես Մնձուր գետի, որպես Անահիտ դիցամոր աղբյուրների, որպես Մնձուրի լեռների արձագանք:

Դերսիմում մինչ օրս պահպանվել է մոմավառության ավանդույթը Անահիտի աղբյուրներ կոչվող սրբավայրում՝ Մնձուր գետի ակունքում: Հենց այստեղ է եղել դիցուհու գլխավոր մեհյանը, որից ընդամենը մի քանի ահռելի քարաբեկորներ են մնացել, որոնց վրա էլ տեղաբնակ ալևիները մոմավառություն են իրականացնում: Աղբյուրի ջուրը սուրբ է համարվում, նրան բուժիչ հատկություններ են վերագրվում:

Լուսինե Նազարյան

ՆՈՒԲԱՐ հայ ավանդական երգի-պարի խմբի գեղարվեստական ղեկավար

Մի ԲՈՒՌ ԵՐԳ ՄՆՁՈՒՐԻ ԼԵՌՆԵՐԻՑ

1.Սուրբ Կարապետ - Սուրբ Կարապետ եմ գնացել – Սուրբ Կարապետի պաշտամունքը հայոց մեջ չափազանց կարևոր է եղել, նա համարվել է մուրադատու, այսինքն իղձերն իրականացնող սուրբ, և նրան նվիրված ուխտագնացության երգերը շատ են: Ամենազորավորը համարվել է Մշո սուրբ Կարապետը, և հավանաբար հենց դրա համար, թեպետ Խարբերդի տարածքում ևս եղել է սուրբ Կարապետի վանք, բայց երգում ասվում է Մշո սուլթան սուրբ Կարապետ:

2.Վիճակի երգ – համբարձման տոնի երգեր: «Ձեր աղջիկը ջուրն ա գացեր» սկզբնատողով, ավելի շատ կարծես խնամոցիկի երգ լինի, աղջկա ու տղայի տերերի վեճ-կատակերգ, բայց բնօրինակում, սկզբնաղբյուրում նշված է որպես վիճակի երգ:
«Դուն գիտես մոռցեր եմ քեզ» - «Աղջիկներ մանի ըսեք» - Թեթև շուրջպար – դարձյալ համբարձման սիրային և կատակային մանիներով համեմված պարերգեր են, որ երիզվում են թեթև շուրջպարի եղանակով:

3.1. Ձեյնո – Ձեյնո անունով մի աղջիկ աղբյուրի ճանապարհին հանդիպել է իր սիրելիին, մի հովիվ նրանց տեսել է ու լուրը հայտնել ամբողջ գյուղին, ի վերջո Ձեյնոն ամուսնացել է իր սիրածի հետ ու չար լեզուները լռել են, և կրկնակ՝ երնեկ Ձեյնոյին: Այս պարերգի ոճի սիրերգը այն եզակի նմուշներից է, որ կոնկրետ դեպքի, կոնկրետ անձի մասին է, և որ ավելի կարևոր է, երգը, ամենայն հավանականությամբ, մեզ է հասել ամբողջությամբ:

3.2. Մայրամ արաղ բեր – Բաղչան ցանիմ լահանա - պար Շորոր – Հետաքրքիր, ինքնատիպ պարերգեր են, յուրաքանչյուրից 2 տուն են փոխանցել բանասացները, և հետաքրքիրն ու կարևորն այն է, որ տներն իրար հետ սյուժետային և տրամաբանական կապ ունեն, այսինքն գործ ունենք բնօրինակ նմուշների հետ: Առաջինի մեղեդային բաղադրիչը մեզ համար փոքր-ինչ անսովոր է, 2-րդը տիպիկ պարերգ է, շատ հարմար 2 գնալ 1 դառնալ տեսակի պարի համար, 3-րդը՝ «Հայդե էրթանք վերի էգին պզդի հարս» սկզբնատողով, կատարյալ վերվերի է, իսկ շարքը երիզել ենք նույն շրջանի Շորորի մի գեղեցիկ նմուշով:

4.Էրվիմ օյ - Շուրջպար - պարերգերի շարք՝ էրվիմ օյ պայմանական վերնագրով՝ ըստ առաջին երգի կրկնակի, իսկ պարերգերը համադրել ենք ելնելով ոչ միայն մեղեդիների հարմար և հեշտ համադրվելու հանգամանքից, այլև կրկնակների և դարձյալ երիզել ենք տեղական շուրջպարի ևս մեկ եղանակով: Չորս երգ է, որոնք միավորել, ամբողջացրել ենք ընդհանուր միջնանվագով, որն իրականում առաջին երգի կրկնակն է:

5.Հարսանեկան երգեր՝ Աղվոր, քեզ ո՞ր մարն է բերեր, էլեք տեսեք ծառն է ծաղկեր – «Աղվոր, քեզ ո՞ր մարն է բերեր» - հարսնացուի գովքի երգ է՝ համաչափ, միևնույն ժամանակ ազատ շարադրանքով, և «էլեք տեսեք ծառն է ծաղկեր» սկզբնատողով ծառ գովելու երգ: Այս 2 երգատեսակները հարսանեկան ծիսաշարի ամենակարևոր հանգրվաններից են, հատկապես ծառի (որպես ընտանիքի խորհրդանիշ) և թագվորի գովքերը:

6.Նազլուի երգը – բնագրում գրված է Նազլուի շերը: Շերը քնարական երգի տեսակ է, եզրույթը հատկապես գործածական է եղել Ակնում, բայց փաստորեն Չմշկածագի, Դերսիմի շրջանում ևս երգի որոշակի մի տեսակը շեր է անվանվել: Նազլուին նշանել են անտեսք, անարժան մեկի հետ: Աղջիկը կեսգիշերին, իր տեղը մի բարձ դնելով, իր սիրած Փիլոյի հետ փախել է: 3-րդ տան մեջ հանդիպում ենք մի շատ հետաքրքիր ծիսակատարության մոտավոր նկարագրության՝ Նազլուն թունիրը էջուցին, ձեռքն ու ոտքը հինայեցին, սա հավանաբար թոնրի վրա արվող պսակի արարողության մասին է, իսկ թե ինչ ոսկի օրենք են փոխել, կարող ենք միայն ենթադրել, հավանաբար Նազլուի փախուստը ներել և սիրելիի հետ ամուսնացնելու մասին է խոսքը:

7.Բլբուլն եկեր (Գարուն) Անտունի – Չմշկածագի անտունիներն առանձնանում են իրենց բանաստեղծական և երաժշտական լեզուների հարստությամբ, ինքնատիպությամբ, երգերի կառուցվածքների կատարելությամբ, ձայնածավալով, սրանք, ինչպես և Ակնա երգերը, կարող ենք պրոֆեսիոնալ ստեղծագործություններ համարել: Պանդխտության երգի կատարյալ նմուշ է, որը պահանջում է կատարողական վարպետություն: Սիրելին մեկնել է պանդխտության, նրանից լուր, նամակ չկա, կողակիցը մնացել է մենակ՝ ինքն իր ցավի ու տառապանքի հետ:

8.Կաքավ Անտունի «Կաքավ մը կայնե քարին» - Անտունի-հայրեններից ամենաողբերգականը՝ ձագին կորցրած կաքավի մասին: Ինչու «անտունի-հայրեն», որովհետև այս անտունիները հորինված են հայրենի սկզբունքով՝ սկսած տաղաչափությունից, մինչև դրանից բխող մեղեդայնությունը:

9.Խաչին օր լուսնկա լուս էր – Չքնաղ անտունիներից մեկը՝ տուն-կրկնակ հստակ կառուցվածքով: Պանդխտությունից վերադարձածի քրոջ երգն է, Խաչի տոնի լուսադեմին քրոջը լուր են տվել, թե եղբայրդ պանդխտությունից վերադարձել է, քույրը մի դդմակ նռան գինի վերցրել ու լալով գնացել է անօրեն հարսի երեսից տառապած եղբորը տեսության:

10.Օրորոցի երգ – Ներնի ըսեմ քնանաս – բոլոր օրորոցի երգերն ունեն մի շատ մեծ, կարևոր ընդհանրություն, դրանք գրկանոցի, օրորոցի միջինի գովքի կատարյալ նմուշներ են, երգողի, այսինքն գրկանոցի մոր կամ տատի՝ երեխայի հետ կապված երազանքների, ցանկությունների, բարեմաղթությունների կատարյալ ամբողջություն, օրորոցի միջինը միայն երկնայինների հետ կարող է համեմատվել, միայն երկնայինների հետ կարող է զրուցել:

11.Մազ հյուսելու երգ – Աղջկա մազ հյուսելը հատուկ ծես է եղել, հատկապես նոր նշանելու աղջկա մազը, երբ առաջին անգամ մազերը 2 ճյուղի են բաժանել ու 2 ծամ արել:

12.Երգաշար - «Ախ յըլլեի» նմուշը Արաբկիրի շրջանից է, կարելի է ասել մնացածների հետ կապ չունի, բայց քանի որ շարքը կազմելու համար լավ սկիզբ ենք համարել, որոշեցինք թողնել իր տեղում: - «Աղջիկ Մայրամ ինչ կորուսիր» սկզբնատողով զուգերգ է - «Արև կընե, շուք կընե, մոմշորը կամ մուշամբան տերև կընե» 2 տարբերակ գտանք, մեկը՝ Աճեմյանի ժողովածուի, մյուսը՝ Թումաճանի ժողովածուի մեջ, հավանաբար պանդխտության հետ կապ ունի՝ գացեք ըսեք էղբորս կամ իմ յարին, յարդ կամ քուրդ շատ բարև կընե: - Աղջիկ քըզի շաքար առնեմ, դարձիր մերն էկո, ամուսնության յուրատեսակ առաջարկություն: - Տեները մէլլար, կտեսնան, կարմիր մի հագնիր կճանչնան, ևս մեկ սիրերգի նմուշ: - «Հայդե մեր տունը» ևս մեկ զուգերգ-ամուսնության առաջարկ: - «Ալ կըլլի աղջիկ» ենթադրաբար հինա դնելու ծեսի երգանմուշ է, ամբողջական տեքստը փոքր-ինչ խառնված է, և հինայի ծեսի հետ կապողը միայն Ալ կըլլի աղջիկ տողն է, թե որքան ալ, որքան մուգ կստացվի աղջկա ձեռքի հինան: - «Եկեք պար մի բռնենք, օսկեկ մի արժե» զատկի տոնի երգերից է, Օր պար, ճոր պարի նման ոսկուն հավասար ինչ-որ պարի հրավեր, նորից գարուն է եկել, պետք է տներից դուրս գալ: - Քառսուն մանուկ ուխտատեղ, ուխտագնացության ևս մեկ երգանմուշ: Քառսուն մանուկ կամ քառսուն մանկանց, քառսնից մանկանց վանքերը ևս հայտնի ու կարևոր սրբատեղիներ են եղել, գուցե ոչ այնքան հայտնի կամ զորավոր, ինչպես սուրբ Կարապետը, ըստ երգը հորինողի, Քառսուն մանուկը և լավ տեղ, և ուխտատեղ, բայց իր ցավի դեղը չի գտել:

13.Բաղչաները խոտ կըլլի – Տարածաշրջանին խիստ բնորոշ ռիթմիկ ու մեղեդային կառուցվածքներով պարերգ է, որի 2-րդ տան մեջ ոչ միայն բարակ, էրկան բոյն է գովերգվում, այլև երգելու կարողությունը, որն ինչպես նկատում ենք, տարածաշրջանին բնորոշ է, որովհետև միայն երգեցիկ ազգագրական գոտում է ընդունված լավ երգ ասողին գովել, միայն երգեցիկ շրջանից կարելի էր այսքան շատ, մեկը մեկից սքանչելի ու բազմազան, բազմաժանր նմուշներ գրանցել:

Մի քանի երգ
մանչուկի լեռնէրից

1.Սուրբ Կարապետ
2.Վիճակի երգ
3.Զեյնո
4.Էրվին օյ
5.Հարսանեկան երգեր
6.Նազլու
7.Բլբուլն եկեր
8.Կաքավ
9.Խաչին օր լուսնկա լուս էր
10.Օրորոցի երգ
11.Մազ հյուսելու երգ
12.Երգաշար
13.Բաղչաները խոտ կըլլի

Աղբյուրները՝
Հովհ. Աճեմյան, Ավ. Մեսումենց «Հարսնաճղայ». հաւաքածոյ հայ ժող. երգերու Զմշկածագէն եւ շրջաններէն, 1955
Միհրան Թումաճան «Հայրենի երգ ու բան»

Լուսաղիսաղ՝ քաղ-Սիշեվ ՀԽՍՀ, 1985 թ.
Ընկեղ գյուղի Ընկեղաց եկեղեցու գաղտաքանդակ

1. ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Սուրբ Կարապետ եմ գնացեր,
Օդան եմ պառկե մնացեր,
Մուրադ տվե չեմ իմացեր,
Մուշու սուլթան սուրբ Կարապետ:
Սուրբ Կարապետ կայնե սարին,
Մեջքն է տվե մեռմեռ քարին,
Մուրադ կուտա ըխտավորին,
Մուրադատու սուրբ Կարապետ:
Սուրբ Կարապետ բանցր բոլոր,
Ուր ճամփան է օլոր-մոլոր,
Ուր դուռ կուգա շատ ըխտավոր,
Մուշու սուլթան սուրբ Կարապետ:

2. ՎԻՃԱԿԻ ԵՐԳ

2.1. Ձեր աղջիկը ջուրն ա գացեր,
Սիթիլը հոնտեղ ա մոռցեր:
Ձեր տղան ալ փատն ա գացեր,
Հոտոց կացին հոն ա մոռցեր:

Ձեր աղջիկը սուրբ խաչ գացեր,
Տարած մոմը ջեբն ա մոռցեր;
Ձեր տղան ալ արտն ա գացեր,
Դառնալու ճամփան ա մոռցեր:

Ձեր աղջիկը դրացնին տունն ա,
Մեր տղան կառնա կտանա:
Հեփ ձեր տղան աղջիկ տանա,
Անոնց ճամփան դոր մեր տունն ա:

2.2. Դուն գիտես մոռցեր եմ քեզ, տարնա նինա տարնա նինա,
Դրեր եմ սրտիս մեջը, տարնա նինա տարնա նինա
Չեմ մոռցեր մոռնալիք չես…
Կնայիմ դառնալիք չես…
Խմեր ի ալ եմ եղեր…
Սիրուդ հիլալ իմ եղեր…
Ես հերու բիլբուլ էի…
Էս տարոք լալ իմ եղեր…

2.3. ԱՂՋԻԿՆԵՐ մանի ըսեք,
Ձանիման ջանի ըսեք,
Ուր որ գեշ կեսուրմը կա,
Գըրողը տանի ըսեք:
Աղջիկ ալամով աղջիկ,
Ունքդ ղալամով աղջիկ,
Ես կուզեմ մարըդ չի տար,
Գընա կորիր շան աղջիկ:

3. ԶԵՅՆՈ

3.1 Զեյնոն ջուրը գացեր ա,
Փեշը չամուռ թախտեր ա,
Սիրածն անդեղ տեսեր ա,
Իր մուրադին հասեր ա:
Էրնեկ Զեյնոյին վրա…

Չոբան մի աս դեսեր ա,
Լըման գեղին ըսեր ա,
Զեյնոն սիրածն առեր ա,
Չարն ասանկ պարտըկվեր ա:
Էրնեկ Զեյնոյին վրա…

3.2 Մայրամ արաղ բեր խմեմ,
Երեսդ մեզե էնեմ,
Աման, աման, թելլի Մայրամ,
Աման, աման, թելլի Մայրամ:
Ես արաղը ինչ տենիմ,
Ես քեզ տեսնելու կենիմ,
Աման, աման, թելլի Մայրամ,
Աման, աման, թելլի Մայրամ:

Բաղչան ցանիմ լահանա,
Յարս չունի մահանա,
Վարդ ըլիմ, քովը բուսնիմ,
Շուք էնիմ, որ քնանա:
Բաղչան ցանիմ մաղդանոս,
Ինչ բան ունիս եկար հոս,
Ես գիտեմ միտքդ ինչ է,
Փնտրածդ չկա հոս:

Հայդե էրթանք վերի էգին, պստի հարս,
Ես վարդ քաղեմ դու մանուշակ, պստի հարս,
Քաղեմ, քաղեմ, գոտիդ թաղեմ, պստի հարս:

Պստի հարսը էլավ գնաց կրակի,
Խելքը դարձավ, գլոխը զարգավ դիրեկի,
Օրն էր շաբաթ պիտի լուսնար կիրակի:

4. ԷՐՎԻՄ ՕՅ

Նվագելով տամբուրա, էրվիմ օյ,
Ես բարակ ծառը ելա, էրվիմ օյ,
Վախիմ քի իյնամ մեռնիմ, էրվիմ օյ.
Նշանածս այլոց մնա, էրվիմ օյ,
էրվիմ տեր իմ տուն էկո, տուն էկո…
Տամբուրաս թել իմ կապեր էրվիմ օյ,
Արցունքներս մի քակեր էրվիմ օյ,
Ես գացեր իմ շուտ կուգամ էրվիմ օյ,
Ուրիշի խոսք մի լսե էրվիմ օյ,
էրվիմ տեր իմ տուն էկո, տուն էկո…

Աղվոր աղջիկ մազ ունիս,
Բիլբիլի փերվազ ունիս,
Խոսքիս պատասխան չես տար,
էդ ինչ խըտըրնազ ունիս:

Մեր բախչըտին տան մոտ է,
Վարդն անուշ կիոտե,
Անոր անօրեն սերը
Որդ եղեր, սիրտս կուտե:

Նստեր է, դուռ կշինե,
Ձեբիկը նուռ կդնե,
Սրմա մազերուն ղուրբան,
Ֆեսիկը ծուռ կդնե:

Տեներն էլլալս կուգա, նա նա նա
Դերվեր նայիլս կուգա, նա նա նա
էլին տղան իմ ինչս է, նա նա նա
Առնալ փախչիլս կուգա, նա նա նա:

Տեներն էլլամ ինչ տենիմ նա նա նա
Դերվեր նայիլն ինչ տենիմ նա նա նա
էղեր ես բոյովդ օսկի նա նա նա
Սիրտս չուզեր ինչ տենիմ նա նա նա

Հոյ նա նա, հոյ նանա, աղջիկ բարակ ձենով ես
Հոյ նա նա, հոյ նանա, մի հեռանա իմ քովես
Հոյ նա նա, հոյ նանա, Ես քո սիրուդ վառել եմ
Հոյ նա նա, հոյ նանա, ինձի կսեն գինով ես

Հոյ նա նա, հոյ նանա, Տեներն ի վար նայեցա
Հոյ նա նա, հոյ նանա, Ես քո սիրուդ վառեցա
Հոյ նա նա, հոյ նանա, Թշնամիս քովդ է կայնե
Հոյ նա նա, հոյ նանա, Նայեցա ու հեռացա
Հոյ նա նա, հոյ նանա,
Հոյ նա նա, հոյ նանա…

5. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

5.1. Աղվոր քեզ որ մարն է բերեր
Ան թուխաչվի մարն է բերեր
Մարն է բերեր մեզի համար
Մենք ենք եկեր քեզի համար:

5.2. Էկեք տեսեք ծառն է ծաղկեր/2
Ծաղիկն ու արևն են վրան,
Արևն ու ծաղիկն են վրան:
Երբ նռնենուն ծառը ն ծաղկի/2
Արևդ անոր նման ծաղկի
Ծաղիկդ անոր նման ծաղկի:
Ուր են ասոր հայրն ու մայրը
Ուր են ասոր քույր եղբայրը
Թող գան տեսնան թագավորը
Թող գան գովեն թագավորը:
Գացեք բերեք զույգ մը տատրակ
Հետն ալ բերեք զույգ մը սոխակ
Որ գան գովեն թագավորը/2

5.3. Էլեք գացեք, էլեք գացեք,
Աստված սիրեք էլեք գացեք,
Էս իրիկուն երկար նստաք,
Վաղը նորեն հրամեցեք:

Օրը գնաց, մութը պատեց,
Տանը տերը ժանգը իք կախեց,
Էս իրիկուն արդեն ուշ է,
Մնալը դժնեկի փուշ է:

Այսօր օրը կիրակի է,
Վաղը նորեն գործի օր է,
Մնալուն համը փախեր է,
Գնացողաց ճամփան հոն է:

6. ՆԱԶԼՈՒ

Խընտրվեցը կուգա քեյրան,
Ավետիս, աղջիկդ ա ջեյրան,
Կոշտ ու պռոշ չարոխ բերան:
Նազլուն կեսքըշերուն աշեց,
Իրեն տեղը բարձ մի թողեց,
Էլավ փիլոյին քով վազեց:
Նազլուն թունիրը էջուցին,
Ձեառքն ու ոտքը հինայեցին,
Օսկի օրենքը փոխեցին:

7. ԲԼԲՈՒԼՆ ԵԿԵՐ

Բլբուլն եկեր կանչեց, գարուն է, գարուն,
Մի բանաք յերանիս, խորուն է, խորուն:
Ես ալ յարուկմ ունիմ ինկեր է հեռուն,
Գիշեր ցերեկ կուլամ, արցունքս է արուն:
Նստեր եմ մինակուկ, գիշեր է, գիշեր,
Սիլայես գիր չիկա, ըզգիս չի հիշեր:
Չխոսված, չլսված ցավեր եմ քաշեր,
Ինք՝ հոնտեղուկ, ես՝ հոս, հոգիս է մաշեր

8. ԿԱՔԱՎ

Անտունի

Կաքավմը կայնե քարին,
Ինք կուլար, արցունքն էր էրին,
Հարցա՝ ի՞նչ կուլաս, կաքվուկ,
Ըսաց՝ ձագուկներս տարին:

Էրթամ իյնամ երկրե երկիր,
Իմ սիրուն ձագուկս փըռռիմ,
Գտնամնը, առնիմ դառնամ,
Չգտնամ՝ թողնիմ հեռուրնամ:

9. ԽԱՉԻՆ ՕՐ ԼՈՒՍՆԿԱ ԼՈՒՍ ԷՐ

Անտունի

Խաչին օր լուսնկա լուս էր,
Կաժիկմը մանած մանեցի,
Էկին քի եղբերդ է եկեր,
Դդմակ մը նռհատե գինի
Առի ու գացի…
Էղբեր, ույ սատկիմ արևուդ,
Քույրդ է եկեր, բաց քու դուռդ,
Կարոտ տեսքիդ տարիներով
Հատավ սիրտս ըսպասելով…
Ըսի ու լացի…
Չինար բոյը տեսա կուլար,
Արդյոք կարոտեն էր, հերսեն,
Կտառապին քույր ու եղբայր
Անօրեն հարսին երեսեն…
Ըսի ու լացի…
Էղբեր մ’ալ կսեմ ուշ է ուշ,
Քանց մեղր ու շաքարն ըլ անուշ,
Կարոտով թող մեռնի քույրդ,
Չի տեսնա երբեք վատ օրդ …
Ըսի ու լացի…

10. ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

Ներնի ըսեմ քընանաս,
Ղուշիս, օրոր, օրոր,
Հազար բարու տիրանաս,
Գառնուկս օրոր, օրոր, է՛յ…

Պաղչան կախեմ կախօրան,
Ղուշիս, օրոր, օրոր,
Բըլբուլները գան վրան…
Գառնուկս օրոր, օրոր, է՛յ…

Լուսունկան կապեր կամար,
Ղուշիս, օրոր, օրոր,
Ես թող լամ քեզի համար…
Գառնուկս օրոր, օրոր, է՛յ…

11. ՄԱԶ ՀՅՈՒՍԵԼՈՒ ԵՐԳ

Խելքդ հուսա, ծամըդ հուսա,
Քանի շունը հաչե էրկընանա թե հուսա…
Խելքդ հուսա, մազըդ հուսա,
Քանի քամին փըչե էրկընանա թե հուսա…

12. ԵՐԳԱՇԱՐ

12.1. Ախ յըլլեի յըլլեի,
Յազմաճի մը յըլլեի,
Անուշ կանչիդ ետ գայի,
Բողչաս դուռդ դնեի,
Գիտցիր աղվող ես գըզի
Յըմեն յանպես կուտայի:
Ախ յըլլեի յըլլեի
Կարժ մը մանած յըլլեի
Նեզուքիդ վրա յըլլեի
Երկու մատիդ յըլ կախեն
Դերդեկիդ փաթտըվեի
Փաթտըվեի հատնեի:

12.2. Աղջիկ Մայրամ ինչ կորուսիր,
Կուլաս կուլաս ժուռ կուգաս,
Թևիս թևնոցն եմ կորուցել,
Կուլամ կուլամ ժուռ կուգամ:

Թևիդ թևնոցն ուր կորուսիր,
Կուլաս կուլաս ժուռ կուգաս,
Ճամփուն վերև դեպի սարեր,
Կուլամ կուլամ ժուռ կուգամ:

12.3. Արև կընե շուք կընե,
Մոմշորը տերև կընե,
Գացեք ըսեք իմ յարին
Յարդ շատ բարև կընե:

Արև կընե շուք կընե,
Մուշամբան տերև կընե,
Գացեք ըսեք էղբորս
Քուրդ շատ բարև կընե:

12.4. Աղջիկ քըզի շաքար առնեմ, դարձիր մերն էկո.....
Շաքարեղեն թե չգտնեմ, դարձիր մերն էկո...
Քըզի ղաթ մը հագուստ առնեմ, դարձիր մերն էկո...
Թե դերձակը հոն չգտնեմ, դարձիր մերն էկո...
Քըզի զույգ մը կոշիկ կառնեմ, դարձիր մերն էկո...

12.5. Տեները մ'էլլար, նա նա նա, կտեսնեն
Կարմիր մի հագնիր նա նա նա, կճանչնան,
Թշնամիներս շատ են քեզ ձեռքես կառնեն…
Առտըվանց որ կելլամ ցեթեր արևը,
Կրակ մըն է ընկեր սրտիս վերևը,
Գոնե գրե կարդամ սիրույդ բարևը…
Ես անգիտակ էի, դուն սեր գիտցուցիր,
Լեզուդ կրակ ըրիր ու զիս վառեցիր,
Թե որ չէիր սիրում, ինչու՞ խաբեցիր…

12.6. Հայդե մեր տունը
Տղա - Հայդե մեր տունը, մեր տունը, մեր տունը,
Աղջիկ - Հոս աղեկ է քընց ձեր տունը, ձեր տունը:
Տ. - Հայրս մայրս կուզեն տեսնալ մեզ տունը,
Ա. - Հայրդ մայրդ թող զիս տեսնան մեր տունը:
Տ. - Դրացիներս կուզեն տեսնալ մեր տունը,
Ա. - Դրացիներդ չուզեն տեսնալ ոչ տունը:
Տ. - Հայրդ մայրդ մեզ կսպասեն մեր տունը,
Ա. - Հայրս մայրս ինչ բան ունին ձեր տունը:

12.7. Ալ կըլլի աղջիկ, նա նա նա, ալ կըլլի,
Շաքար բերան շրթունքդ մեղր կըլլի:
Սրճեփը դրի նա նա նա կըրակը,
Յարս չուզեր գալ նա նա նա իմ գիրկը,
Քենոր նստեր ախ նա նա նա անկյունը:
Անգութ ես աղջիկ, նա նա նա, անգութ ես,
Առաջ կսիրեիր հիմակ ըլ սուտ ես,
Ուրիշին սիրուն նա նա նա աչք ունիս:
Նոր բաղնիքին յար, նա նա նա, վըրան իմ,
Աստըծու խաթեր, նա նա նա, յարըն իմ,
Եթե մերժես, ես քու սուգդ տի պահիմ:

12.8. **Եկեք պար մի բռնենք** օսկեկ մի արժե
Ոսկեկ մաման նստեր չորթան կըլոսե:
Ալվա եկան գարնան երկար օրերը,
Հանեցեք հիները հագեք նորերը:
Հանեցեք հիները հագեք նորերը,
Ինչ կըմնաք ներսը երթանք սարերը:
Ալվա գարուն բացվեր, ծառներն են կանաչեր,
Բըլբուլը իր երգով մեզ իմացուցեր:

12.9. **Քառսուն մանուկ** ուխտատեղ,
Հեմ ուխտատեղ, հեմ լավ տեղ,
Ով որ իր յարը կուզե,
Թող առնա ելլա այնտեղ:

Քառսուն մանուկ ուխտատեղ,
Հոն չի գտա ցավու դեղ,
Սրտիս սիրածը չի կար,
Որ դառնայինք միատեղ:

13. ԲԱՂՉԱՆԵՐԸ ԽՈՏ ԿԸԼԼԻ

Բաղչաները խոտ կըլլի, նա նա նա
Ցորեն գարի խըթ կըլլի, նա նա նա
Տղան աղջկա սիրուն, նա նա նա
Ձուվախներե խեթ կըլլի, նա նա նա:

Դուն բարակ, ես բոյդ էրկան, նա նա նա
Էյլամը ձենիդ հեյրան, նա նա նա
Էլի էրթանք մեր տունը, նա նա նա
Ես իլիմ քիզի ղուրբան, նա նա նա:

Ծառի վրա նուշ կըլլի, նա նա նա
Պաքիկ մի տաս քիշ կըլլի, նա նա նա
Էգյալ տի տաս հըմա տու, նա նա նա
Վաղվան մնա ուշ կըլլի, նա նա նա:

Սասուն

Լուսանկարը՝ Տիգրան Մադոյանի

«Նուբար» հայ ավանդական երգի-պարի խումբը հիմնադրվել է 2006թ. ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գեղարվեստական դաստիարակության և մշակույթի մանկապատանեկան կենտրոնի կազմում: Խմբի գեղարվեստական ղեկավարն է էթնոերաժշտագետ, ազգային երգերի կատարող Լուսինե Նազարյանը:
Խմբի երկացանկում տեղ են գտել Հայաստան աշխարհի գրեթե բոլոր ազգագավառների ավանդական մշակույթի նմուշները: Դրանց հիման վրա պատրաստվել են թեմատիկ համերգներ և ֆիլմեր: Կարնո տարածաշրջանի երգեցիկ նմուշների հիման վրա նկարահանվել է «Կարմրավանքի երգ-պատմությունները» ֆիլմ-համերգը, որում տեղ գտած նմուշների գերակշիռ մասը խմբի բանահավաքչական աշխատանքների արդյունքում հայտնաբերված նմուշներ են, որ առաջին անգամ հնչել են «Նուբարի» կատարմամբ: Համշենի երգերը և պարերը առաջին անգամ, որպես հայաստանյան խումբ, ներկայացվել է ամբողջական համերգային ծրագրով, որին հաջորդեց Դերսիմի տարածքի ավանդական մշակույթի նմուշներից կազմված համերգային ծրագիրը, որտեղ բազմաթիվ նմուշներ հնչում էին առաջին անգամ:

Խումբն իր գործունեության տարիներին ունեցել է բազմաթիվ համերգներ ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի բոլոր մարզերում, այդ թվում ամենահեռավոր գյուղերում, մասնակցել միջազգային փառատոների Բուլղարիայում, Իտալիայում, Էստոնիայում, «Հայաստանը խաղաղության խաչմերուկում» միջազգային փառատոնին, Պոլիտեխնիկի ազգագրական երգ ու պարի ամենամյա փառատոնին, «Գութան» Հայաստանի ազգագրական երգ ու պարի ամենամյա փառատոնին: Ունեցել է բազմաթիվ ռադիո և հեռուստաելույթներ, խմբի ձայնագրությունները հնչում են նաև Եվրոպական հեռարձակողների միության հանրային ռադիոկայաններով:
Շատ կարևոր է եղել «Նարեկացի» արվեստի միության հետ համագործակցությունը, ավելի ճիշտ մեծ, ջերմ բարեկամությունը, որի արդյունքում պատրաստվել է այս ձայներիզը:

Երաժիշտներ

ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – բլուլ, շվի
ՄԱՐԻԱ ՇԱՀԻՆՅԱՆ – քանոն
ՀԱՅԿԱԶ ԲԱԼՈՒՄՅԱՆ – դուդուկ
ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ – զուռնա
ՆԱՐԵԿ ԱՐՇԱԿՅԱՆ – դհոլ, կոպալ դհոլ
ՍԱՀԱԿ ՅԱՆԹՈՒՐՅԱՆ – դափ, բենդիր, կախոն

Երգիչներ

ԼՈՒՍԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆ (2, 5, 6, 8, 9, 10, 11, 12)
ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ (3, 4, 5, 6, 7, 9, 12)
ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (3, 4, 6, 9,12)
ԱՐՈՒՍՅԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (3, 4, 9, 12)
ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ (2, 3, 12)
ԱԼԵՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ (2)

1.Սուրբ Կարապետ
2.Վիճակի երգ
3.Ձեյնո, Մայրամ արաղ բեր
4.Էրվիմ օյ
5.Հարսանեկան
6.Նազլու
7.Բլբուլն եկեր
8.Կաքավ
9.Խաչին օր լուսնկա լուս էր
10.Օրորոցի երգ
11.Մազ հյուսելու երգ
12.Երգաշար
13.Բաղչաները խոտ կըլլի

ՄԻ ԲՈՒՌ ԵՐԳ ՄՆՁՈՒՐԻ ԼԵՌՆԵՐԻՑ

«Նուբար» հայ ավանդական երգի-պարի խումբ
Գեղարվեստական ղեկավար՝ Լուսինե Նազարյան

Նարեկացի Արվեստի Միություն
Երևան, 2022

Ձայնագրությունը և համադրումը՝ Էդուարդ Արշակյանի
Գրաֆիկ դիզայներ՝ Մարգարիտա Տեր-Գրիգորյան
Սրբագրիչ՝ Մարինե Հարությունյան
Նախագծի համակարգող՝ Գայանե Խաչատրյան
Գործադիր պրոդյուսեր՝ Նարեկ Յարութիւնեան

Հատուկ շնորհակալություն
Հայկական ճարտարապետությունն
ուսումնասիրող հիմնադրամին

© ℗ 2022 Նարեկացի Արվեստի Միություն
© 2022 «Նուբար» հայ ավանդական երգի-պարի խումբ

ISBN 978-9939-9085-9-5
ISMN 979-0-69380-328-6

Սկանավորեք QR կոդը՝ երգերը լսելու համար

Մի բուռ երգ Մնձուրի լեռներից

ՆՈՒԲԱՐ

ՆԱՐԵԳԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՍԻՈՒՐԹՅՈՒՆ
NAREGATSI ART INSTITUTE